ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2024 թվականի փետրվարի 20-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է
«Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը՝ «**ՍՄ-ՄՀ-ԲՄԱՇՁԲ-24/02**»:

Պատվիրատուն՝ ՀՀ Սյունիքի մարզի Մեղրիի համայնքապետարանը, որը գտնվում է Մեղրի քաղաքի Զորավար Անդրանիկի 2 հասցեում, ստորև ներկայացնում է իր կարիքների համար շինարարական աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «**ՍՄ-ՄՀ-ԲՄԱՇՁԲ-24/02**» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի վերաբերյալ 2024 թվականի փետրվարի 18-ին և փետրվարի 19–ին ստացված հարցադրումը և դրա վերաբերյալ 2024 թվականի փետրվարի 20-ին տրամադրված պարզաբանումը՝

Հարցադրում N 1՝ Հարցադրման ստացման ամսաթիվ 18.02.2024թ:

Հարգելի հանձնաժողով ըստ մասնակցի՝ նախահաշվում կատարել շտկում՝ ներառելով նախկին վերելակի ապամոնտաժման ծախսերը, ինչպես նաև նախագծում հստակեցնել հորանների չափերը:

Պարզաբանում N 1՝

Հարգելի մասնակից

Հարցմանն ի պատասխան հայտնում ենք, որ դրանով պայմանավորված գնման ընթացակարգին կցված է նախագիծ,որում գրված է,որ վերելակների մոնտաժման գնի մեջ պետք է ներառվի նախկին վերելակի ապամոնտաժումը, բեռնափոխադրումը,հարկերը և տուրքերը:

Ինչպես նաև հորանների չափերի հստակեցման վերաբերյալ հայտնում ենք գնման ընթացակարգին կցված նախագծի 2–րդ մասի 46–րդ էջում հստակ տրված է հորանների չափսերը:

Ըստ որի՝
1) 9 հարկանիների համար (6 հատ) ըստ նախագծողի տրված չափսերի յուրաքանչյուր հորանի բարձրությունը 26,4 մ:
2) 6 հարկանիների համար (2 հատ) ըստ նախագծողի տրված չափսերի յուրաքանչյուր հորանի բարձրությունը 16,5 մ:
Հորանների լայնությունը ըստ նախագծողի տրված չափսերի յուրաքանչյուր հորանը ՝ 1550*1700

Հարցադրում N 2՝ Հարցադրման ստացման ամսաթիվ 19.02.2024թ:

Հարգելի հանձնաժողով ըստ մասնակցի՝ ՍՄ-ՄՀ-ԲՄԱՇՁԲ-24/02 ծածկագրով գնման ընթացակարգի հայտարարություն և հրավերի արդյունքում պատվիատուն պետք է ձեռքբերի ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի կարիքների համար բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգում և վերելակների արդիականացում աշխատանքներ, ինչը ներկայացված է մեկ չափաբաժնով:
Վերլակների տեղադրումը, որը ապրանք է տեղադրումով, իսկ տանիքների նորոգումը աշխատանք չեն կարող միավորվել մեկ չափաբաժնում, քանի որ այն հակասում է ՀՀ գնումների մասին օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ կետին. 2. Արգելվում է խմբավորել առանձին բնութագրեր ունեցող գնման առարկաները մեկ չափաբաժնում, բացառությամբ այն դեպքերի, երբ պատվիրատուն հիմնավորում է նման խմբավորման անհրաժեշտությունը:

Միաժամանակ տեղեկացնում եմ , որ վերելակների տեղադրման և տանիքների նորոգման համար Քաղաքաշինության նորմերի պահանջներն և լիցենզիաների տեսակները տարբեր են:
Խախտվում են ՀՀ գնումների մասին օրենքի 3-րդ հոդվածի ողջ դրույթները:
Հաշվի առնելով վերագրյալ փաստը և հիմք ընդունելով ՀՀ գնումների մասին օրենքի վերանշյալ դրույթները խնդրում եմ մրցույթը բաժանել լոտերի:

Պարզաբանում N 2՝

Հարցմանն ի պատասխան հայտնում ենք, **որ ՍՄ-ՄՀ-ԲՄԱՇՁԲ-24/02 ծածկագրով** ՝ «Մեղրի համայնքի Մեղրի քաղաքի Փարամազի փողոցի 15, 17, 19, 32, 36, 42, Ադելյան փողոցի 15ա, 15բ բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգում և վերելակների արդիականացում» աշխատանքների ձեռքբերումը իր նախագծանախահաշվային փաստաթղթերով հաստատվել է կառավարության միջգերատեսչական հանձնաժողովի 2023 թվականի դեկտեմբերի 28-ի նիստի ժամանակ և խմբավորված է եղել մեկ չափաբաժնում:Վերջինս սուբվենցիոն ծրագրով իրականացվող աշխատանք է, որի մասին նշվել է հրավերում:

Գնումների մասին ՀՀ օրենքի 25–րդ հոդված 2–րդ կետի համաձայն՝ արգելվում է խմբավորել առանձին բնութագրեր ունեցող գնման առարկաները մեկ չափաբաժնում, **բացառությամբ այն դեպքերի, երբ պատվիրատուն հիմնավորում է նման խմբավորման անհրաժեշտությունը**:

Ըստ պատվիրատուի չափաբաժինների միավորումը պայմանավորված է այն հանգամանքով, որ ծրագրի իրականացումը չլինի երկու փուլով տարբեր ընկերությունների կողմից, հետագայում խուսափելով այլ խնդիրներից, որը առկա է եղել Մեղրի համայնքում:Նախկին փորձից ելնելով մեկ օբյեկտում փուլային աշխատանքների կատարման արդյունքում առաջանում են կատարողական ակտերի և փաստացի կատարված աշխատանքների անբարեխիղճ արդյունքներ, որտեղից էլ հիմնականում երկրորդ փուլի շինարարը ճիշտ ժամանակին չի կարողանում սկսել իր կողմից շահած ծրագիրը և ժամանակին ավարտին հասցնել աշխատանքները:

Ուստի պատվիրատուն առաջարկում է մրցույթին մասնակցելու նպատակով որպես ենթակապալառու ընտրել հուսալի գործընկեր քաղաքաշինության նորմերի պահանջներին համապատասխան՝ առանձնացված ըստ գործունեության տեսակների լիցենզիաների՝ «Մեղրի համայնքի Մեղրի քաղաքի Փարամազի փողոցի 15, 17, 19, 32, 36, 42, Ադելյան փողոցի 15ա, 15բ բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգում և վերելակների արդիականացում» ծրագրի աշխատանքները հետագայում ամբողջական պատվիրատուին հանձնելու նպատակով:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «ՍՄ-ՄՀ-ԲՄԱՇՁԲ-24/02» ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Շ. Սարգսյանին:

Հեռախոս՝ 37428643500
Էլեկտրանային փոստ՝ «shushansargsyanh@mail.ru»

«ՍՄ-ՄՀ-ԲՄԱՇՁԲ-24/02» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով